

ԱՌԱՋԱԲԱՆ

Սևանի ավազանում շուրջ մեկ հարյուրամյակ շարունակվող հնագիտական հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև դրանց լրացնող գրավոր սկզբնաղբյուրների ընձեռած տվյալները պարզորոշ վկայում են, որ առևտրա-տնտեսական և էթնոմշակութային փոխառնչությունների վերհաման, հետազոտման ու մեկնաբանման տեսանկյունից խիստ կարևոր այս տարածաշրջանը նշանակալից դեր է ունեցել Հայկական լեռնաշխարհի Բրոնզի-Երկաթի դարաշրջանների պատմական գործընթացներում (Լալայան Ե. 1906, էջ 5-37: Լալայան Ե. 1910, էջ 59-84: Լալայան Ե. 1931, էջ 67-117, 194-199: Մնացականյան Հ. 1965, էջ 95-113: Միքայելյան Գ. 1968: Ադունց Ն. 1972, էջ 179-181, 205-207: Հմայակյան Ս., Բիշիոնե Ռ., Պարմեջիանի Ն. 1996, էջ 47-49: Հմայակյան Ս., Հակոբյան Հ., Բիշիոնե Ռ., Պարմեջիանի Ն. 1998, էջ 39-41: Հմայակյան Ս., Սանամյան Հ. 1998, էջ 41-42: Капанцян Г. 1931: Капанцян Г. 1941: Арутюнян Н. 1985):

Աշխարհագրական այս միավորն ու նրա բնակիչները, ըստ V դարի պատմիչ Մովսես Խորենացու, իրենց անվանումը (Գեղարքունիք՝ սեպագիր տեքստերում «^{KUR}Uelikuh» կամ «^{KUR}Uelikuni») ստացել են հայերի առասպելական մախնի Հայկ մահապետի ժառանգ՝ Գեղամի անունից:

Պատմա-մշակութային վերոհիշյալ գործընթացների առավել վաղ ժամանակահատվածի (Վաղ Բրոնզի շրջափուլ՝ մ.թ.ա. IV հազարամյակի կեսերից մինչև մ.թ.ա. III հազարամյակի վերջին քառորդ) վերաբերյալ մեր տվյալները, հուշարձանների սակավության (մասնաճիճի ուսումնասիրվածության) պատճառով, առայժմ բավական սահմանափակ են ու թերի: Թեև, ըստ տարածքի երկրաբանական հետազոտության արդյունքների, վերը նշված ժամանակագրական սահմաններում Սևանի ավազանի բնակչիմայական պայմանները (մեղմ ձմեռ, տեղումներով առատ ամառ) առավել բարենպաստ պետք է եղած լինեն տեղանքի բնակեցման համար (Саядян Ю. 1983): Ամեն դեպքում, դատելով մինչ օրս այս կամ այն չափով ուսումնասիրված հնագիտական հուշարձանների տվյալներից, կարելի է ենթադրել, որ Սևանի վաղբրոնզեդարյան հասարակությունը չի ունեցել ընդգծված սոցիալական շերտավորում, բնակչությանը բնորոշ են եղել նստակյաց ապրելակերպը և տնտեսավարման երկրագործական-անասնապահական զուգորդված եղանակը: Այս ժամանակահատվածին բնորոշ և կուր-արաքսյան մշակույթին վերաբերող հատուկեմտ համալիրներ հետազոտվել կամ մասամբ պեղվել են Լճաշենում, Չկալովկայում, Նորաշենում, Գավառում (Կամո), Սարուխանում, Ջուլաքարում, Նորաբակում, Ծովակում և Բաբաջանում (Մնացականյան Հ. 1965, էջ 95-98, 111, աղ. II, նկ. 6-10: Հմայակյան Ս., Բիշիոնե Ռ., Պարմեջիանի Ն. 1996, էջ 48: Пилипосян А. 1988, էջ 427):

Դատելով հնագիտական հուշարձանների պեղումների արդյունքներից, Սևանի ավազանում պատկերը կտրուկ փոխվել է մոտավորապես մ.թ.ա. III հազարամյակի վերջին քառորդից: Բացառված չէ, որ այն՝ սոցիալ-տնտեսական մի շարք գործոնների հետ միասին, պայմանավորվել է նաև էկոլոգիական փոփոխություններով (Саядян Ю. 1983): Այս ժամանակահատվածից սկսած Սևանի ավազանը դառնում է ինտենսիվ բնակեցվող տարածաշրջան: Դրա լավագույն վկայությունը՝ մ.թ.ա. XXII/XXI-XIX/XVIII դարերի միջինբրոնզեդարյան (2-րդ փուլի) թռեղք-վանաձորյան մշակույթին վերաբերող հնագիտական համալիրների տարածվածությունն է Գեղարքունիքի գրեթե բոլոր հատվածներում (Ցամաքաբերդ, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն, Հայրավանք, Նորատուս, Հացառատ, Լիճք, Ներքին Գետաշեն, Գեղիովիտ, Ջուլաքար, Վարդենիս, Արդանիշ և

այլն) (Լալայան Ե. 1931, էջ 79-80, 151, նկ. 92, 23: Մնացականյան Հ. 1965, էջ 99-105, աղ. I-III: Փիլիպոսյան Ա. 1989, էջ 25-27: Փիլիպոսյան Ա. 1991, էջ 29-31: Փիլիպոսյան Ա., Հովհաննիսյան Վ. 1991, էջ 33-35: Ենգիբարյան Ն. 1991, էջ 69: Հմայակյան Ս., Բիշինյան Ռ., Պարմեջիանի Ն. 1996, էջ 47-49: Խաչատրյան Լ., Փիլիպոսյան Ա. 1997, էջ 14-15: Պետրոսյան Լ. 1998, էջ 52-53: Մկրտչյան Ք., Պիլիպոսյան Ա., Փալիկյան Ա. 1997, էջ 131-140: Պիլիպոսյան Ա., Մկրտչյան Ք. 1997, էջ 103-105: Պիլիպոսյան Ա., Մկրտչյան Ք. 1998, էջ 101-103): Հատկանշական է, որ վերոհիշյալ ժամանակաշրջանին վերաբերող հնագիտական նյութերը սերում են բացառապես դամբարանային համալիրներից և իսպառ բացակայում տարածաշրջանում այս կամ այն չավտվ պեղված բնակատեղիների շերտագրական հորիզոններում: Հանգամանք, որն անուղղակի կերպով, կարծես թե վկայում է նոր մշակույթը կրողների տնտեսավարման հիմնականում անասնապահական եղանակը և ժամանակավոր (սեզոնային) վրանատիպ կացարաններում բնակվելու պարագան: Սրանով, թերևս, կարելի է բացատրել Սևանի ավազանի բազմաշերտ բնակատեղիներում մ.թ.ա. III-II հազարամյակների սահմանագծի միջինբրոնզեդարյան (թռեղք-վանաձորյան) իրողությունների բացակայության խնդիրը:

Դատելով հնագիտական հուշարձանների պեղումների արդյունքներից, մոտավորապես մ.թ.ա. XVIII դարից Սևանի ավազանի միջինբրոնզեդարյան (3-րդ փուլի) հուշարձաններում (և՛ բնակատեղիներում, և՛ դամբարանադաշտերում) մասամբ գոյատևած ու թռեղք-վանաձորյան իրողությունների կողքին նկատվում են սևան-արցախ-կարմիրբերդյան և կարմիրվանքյան մշակութային խմբերին բնորոշ նյութական դրսևություններ: Վերջիններս վկայված են Լճաշենի, Նորատուսի, Գավառի, Մոթրի ձորի, Հացառատի, Երանոսի, Ծակքարի, Լիճքի, Ներքին Գետաշենի, Ջոջ կողի, Ալբերդի, Զարի դռան, Նորաբակ 1-ի, Կոլ պալի, Ծովակի և այլ բնակատեղիներում ու դամբարանադաշտերում: Այլ խոսքով, Սիջին Բրոնզի այս փուլում արդեն նկատվում է Սևանի ավազանի տևական ժամանակ (շուրջ 400 տարի) լքված վաղբրոնզեդարյան (կուր-արաքսյան) հատուկենտ բնակավայրերի աստիճանական վերաբնակեցումը նշված մշակույթների և մշակութային խմբերի կրողների կողմից: Ըստ որում, դատելով միևնույն դամբարանադաշտի սահմաններում պեղված համաժամանակյա դամբարաններում ու թռեղք-վանաձորյան, սևան-արցախ-կարմիրբերդյան և կարմիրվանքյան մշակութային իրողությունների համատեղ հանդես գալու հանգամանքից, կարելի է ենթադրել, որ քննարկվող ժամանակահատվածում (մ.թ.ա. XVIII-XVI դարեր) վերոհիշյալ մշակույթների և մշակութային խմբերի կրողներն արդեն բնակվել են մեկ ընդհանուր բնակավայրի սահմաններում և թաղումներ կատարել միևնույն դամբարանադաշտում՝ թաղման ծեսի արարողակարգի մանրամասների մեջ (հնարավոր է նաև կենցաղում) դեռևս շարունակելով պահպանել իրենց առանձնահատկությունները: Սևանի ավազանից հայտնաբերված և քննարկվող ժամանակահատվածներին վերաբերող հնամարդաբանական նյութերի ուսումնասիրվածության արդի մակարդակը հնարավորություն է ընձեռում փաստել գանգերի ձևաբանական տարբերակների և տեղի մշակույթների ու մշակութային խմբերի որոշակի վոխկապակցվածությունը համաժամանակյա (սիմխրոն) և նրբակազմության դարաշրջանային փոփոխականությունը՝ տարածամանակյա (դիախրոն) հարթություններում: Ըստ Գեղարքունիքի մ.թ.ա. XVII-XV դարերին վերաբերող գանգաբանական նյութերի, քննարկվող տարածաշրջանում փաստագրվում է գանգվածեղ, երկարադեմ, արխայիկ մարդաբանական տիպ, որն իր զուգահեռներն (նախատիպերը) ունի Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. III հազարամյակի վաղբրոնզեդարյան

(շենգավիթյան փուլ) նյութերում և Մերձավոր Արևելքի ու Միջերկրականի ավազանի վերինպալեոլիթյան և մեզոլիթյան հուշարձաններում (Սկրտչյան Ռ. 1997, էջ 32-33):

Վերը նշված գործընթացների արդյունքում, մ.թ.ա. XVIII-XVI դարերի ընթացքում նույն տարածաշրջանում և անգամ միևնույն բնակավայրի սահմաններում համատեղ գոյակցող և իրենց ինքնուրույն հատկանիշները դեռևս պահպանած ուշ թռեղք-վանածորյան, սևան-արցախ-կարմիրբերդյան և կարմիրվանքյան մշակույթների և մշակութային խմբերի աստիճանական սերտաճման և դրանց կրողները հանդիսացող բնակչության միախառնման հետևանքով, մ.թ.ա. XVI-XV դարերի սահմանագծից Գեղարքունիքում սկսվում են նշմարվել և մ.թ.ա. XV-XIV դարերի ժամանակագրական սահմաններում վերջնականապես ձևավորվել ընդհանուր մարդաբանական նկարագիր ունեցող հասարակություն և վերջինիս պատկանող որակապես նոր մշակույթ, որը մասնագիտական գրականության մեջ ստացել է «Լճաշեն-մեծամորյան» անվանումը (Ավետիսյան Պ., Բադալյան Ռ., Հմայակյան Ս., Փիլիպոսյան Ա. 1996, էջ 8-10): Հնագիտական հուշարձանների ընձեռած տվյալները (հզոր պարսպապատ բնակատեղիներ, մետաղագործության և հատկապես զինագործության աննախադեպ վերելք, ընդգծված սոցիալական շերտավորում ունեցող հասարակության ձևավորում, առևտրա-փոխանակային գործարքների ընդլայնում, ռազմա-քաղաքական միջազգային կապերի հաստատում մերձավորարևելյան հզոր տերությունների հետ և այլն) մատնանշում են քննարկվող ժամանակահատվածում (մ.թ.ա. XV-XIII դարեր) Սևանի ավազանում ձևավորված մարտունակ տոհմա-ցեղային (զուցեն վաղ պետական) կազմավորումների գոյությունը:

Ըստ ձեռքի տակ այսօր առկա տվյալների, վերջիններս իրենց անկախ և ինքնուրույն կարգավիճակը պահպանեցին մինչև մ.թ.ա. VIII դարը, այսինքն մինչև այն ժամանակահատվածը, երբ խնդրո առարկա տարածաշրջանը ներգրավվեց Հայկական լեռնաշխարհում ձևավորված այն հզոր ռազմա-քաղաքական միավորի կազմում, որը ժամանակակից պատմագրության մեջ հայտնի է Ուրարտու - Ուրաշտու - Բիայնիլի - Բիայնելե - Վանի թագավորություն - Արարատ բազմատարբերակ, բայց ըստ էության, հոմանիշ և համարժեք անվանումներով: Հենց վերջինիս մշակույթի և պատմության մի կոնկրետ դրվագին էլ վերաբերում են այս աշխատության մեջ ներկայացված իրողություններն ու դրանց վերլուծությունը: Եվ քանի որ սույն գրքի հեղինակներն իրենց տարբերակն ունեն ավելացնելու վերը թվարկված անվանումներին, ապա, թերևս, կարիք կա հիմնավորելու նման քայլի անհրաժեշտությունը, ինչպես նաև համառոտ անդրադառնալու վերոհիշյալ անվանումներից յուրաքանչյուրի կիրառման ժամանակ ի հայտ եկող որոշ անհարթություններին և անհամապատասխանություններին:

«Ուրարտու» անվան կողմնակիցները (Ժ.Սանդալյան, Գ.Ա. Ղափանցյան, Բ.Ա. Կուֆտին, Բ.Բ. Պիոտրովսկի, Գ.Ա. Մելիքիշվիլի, Ի.Մ. Դյակոնով, Բ.Ն. Առաքելյան, Գ.Բ. Ջահուկյան, Խ.Գ. Սարգսյան, Լ. Վանդեն Բերգե, Լ. Դե Մեյեր, Մ. Սալվինի, Օ. Բելլի, Մ. Վան Լուն, Բ. Մաքսուել-Հիսլոփ և այլոք) գտնում են, որ այն ամենից ամբողջական է արտահայտում Հայկական լեռնաշխարհում հնուց ապրած և մ.թ.ա. IX դարից ինքնուրույն պետականություն ստեղծած ցեղախմբերի հավաքական երկրանունը (Ղափանցյան Գ. 1940: Առաքելյան Բ., Ջահուկյան Գ., Սարգսյան Գ. 1987: Առաքելյան Բ., Ջահուկյան Գ., Սարգսյան Գ. 1988: Пиотровский Б. 1944: Куфтин Б. 1944: Меликишвили Г. 1960: Пиотровский Б. 1962: Дьяконов И. 1963: Мещанинов И. 1978: Sandalgian J. 1900: Maxwell-Hislop K. 1956: Barnett R. 1963: Van Loon M. 1966: Akurgal E. 1968: Piotrovsky B. 1970: Vanden Berghe L., De Meyer L. 1982-1983: Belli O. 1991): Որպես ապացույց բերվում են մ.թ.ա. XIII-VII դարերի աստիճանական արձա-

նագրությունների համապատասխան հատվածները, որոնցում քննարկվող կազմավորումը հիշատակվում է Ուրուատրի (ըստ Սալմանասար I-ի հաղորդման), Ուրատրի (ըստ Ադադ - Ներարի II-ի) և Ուրարտու (սկսած Սալմանասար III-ի ժամանակներից) անվանական տարբերակներով (Կարագեոզեան Յ. 1998, էջ 11-15: Дьяконов И. 1951, текст № 27: Пиотровский Б. 1959, էջ 32-33: Арутюнян Н. 1970, էջ 12: Luckenbill D. 1926, № 114, № 360: Schroeder O. 1921, № 84: Ebeling E., Meissner B., Weidner E. 1926, էջ 113):

«Ուրաշտու» անվանաձևը կիրառողները (Ս. Երեմյան, Ու. Հորովից) չիրաժարվելով «Ուրարտու» անվանումից, այսուհանդերձ վկայակոչում են Հին Աշխարհը ներկայացնող բաբելոնյան քարտեզի վրա (մ.թ.ա. VIII դար), Ասորեստանի թագավոր Նաբուպասարի (մ.թ.ա. 626-604թթ.) մոտ և Արեւմտյան Իրանի հզոր տիրակալ Դարեհ I-ի Բեհիսթունյան արձանագրության մեջ (մ.թ.ա. VI դարի վերջին քառորդ) Հայկական լեռնաշխարհի այդ ռազմա-քաղաքական կազմավորմանը տրվող անվանումները, զրտնելով, որ «Ուրարտու»-ի կողքին և նրան լիովին համագոր կարող է օգտագործվել նաև «Ուրաշտու» երկրանունը (Пиотровский Б. 1944, էջ 29: Меликишвили Г. 1954, էջ 22: Липин Л. 1957, էջ 28, տեքստ 209: Дьяконов И. 1951, АВИИУ—81: Дандамаев М. 1963, էջ 90: Horowitz W. 1988, էջ 148-149, 152-154): Առավել ևս, որ վերջինս պահպանվել է Պատմական Հայաստանի գավառներից մեկի՝ Ռշտունիքի և համանուն իշխանական տան (Ըռըշտունի, Ռշտունի) անվանումներում, ինչն ավելի ևս ընդգծում է «Ուրաշտու» տեղանուն-տերմինի պատմականությունն ու օգտագործման ընդունելի լինելը (Երեմյան Ս. 1963, էջ 79: Հակոբյան Թ. 1968, էջ 180: Կատվալյան Մ. 1983, էջ 682-683):

Անշուշտ փաստարկները հիմնավոր են: Սակայն երկու դեպքում էլ առկա է նշվածը վիճարկող մի հանգամանք: Բանն այն է, որ Հայկական լեռնաշխարհի այս հզոր տերության տիրակալները մայրենի լեզվով թողած բազմաթիվ արձանագրություններում իրենց երկիրը երբեք չեն կոչում Ուրաշտու կամ Ուրարտու: Վերջին անվանումը միայն մի անգամ օգտագործվում է Թուփուզավայի երկլեզու արձանագրության (YKH - 264) աստուրերեն տեքստում, այն էլ ոչ թե «^{mat} Urartu» վանկակապակցությամբ, այլ «^{KUR}URI» գաղափարագրի ձևով, որն արևելագետները՝ դատելով Սինահերիբի արձանագրություններից մեկի (АВИИУ - 60) տվյալներից, նույնացնում են Ուրարտու երկրանվանը (Կարագեոզեան Յ. 1998, էջ 12): Մինչդեռ մայրենի լեզվով արված մի քանի հարյուր տեքստերում պարբերաբար կրկնվում են ^{KUR}Bi-a-i-na («Բիայնա երկիր») և երկու անգամ նաև ^{KUR}Bi-a-i-ni-li («Բիայնիլի երկիր՝ բիայնացիների երկիր») անվանաձևերը, որպես սեփական թագավորության երկրանուն: Ահա այս հանգամանքն էլ նկատի ունենալով, ուսումնասիրողների և արևելագետների մի ստվար խումբ (Մ. Նիկոլսկի, Ա. Մեյս, Լեո, Բ. Պիտրովսկի, Ի. Մեշչանինով, Ս. Եսայան, Լ. Բիյազով, Ս. Հմայակյան, Հ. Ավետիսյան, Ա. Մովսիսյան և այլք) հարմար է գտել օգտագործել ^{KUR}Bi-a-i-na տեղանունը հենց այնպես, ինչպես ներկայացնում են սեպագրերը, կամ էլ կիրառել նրա ժամանակակից հայերենով վերծանելի «Վանի թագավորություն» (բառացիորեն՝ «Վանա երկիր») տարբերակը (Լեո 1915: Հմայակյան Ս. 1990: Հարությունյան Բ. 1998: Մովսիսյան Ա. 1998: Никольский М. 1893: Пиотровский Б. 1959: Есаян С., Биягов Л., Амаякян С., Канецян А. 1991: Аветисян Г. 1992: Sayce A. 1929): Անշուշտ, այն ամենահարազատն է Հայկական լեռնաշխարհի սեպագիր տեքստերի քննարկվող երկրանվանը: Սակայն մասնագիտական գրականության մեջ վերջինիս տարբեր մակարդակներով (լեզվաբանական, էթնիկական, ազգագրական, առասպելաբանական, քաղաքական և այլն) օգտագործումը հաճախ տեղիք է տալիս պատմա-ժամանա-

կազմակերպական, էթնո-ազգագրական և լեզվա-մշակութային անհամապատասխանությունների ու խառնաշփոթությունների: Բանն այն է, որ Հայաստանի պատմության, հայ ազգագրության և լեզվաբանության մեջ վաղուց արդեն ամրակայված են «Վանի բարբառ», «Վանի ազգագրություն» (այս համատեքստում նաև «Վանի տարագ», «Վանի ոսկերչություն»), «Վան-Վասպուրականի մանրանկարչություն» և մմանօրինակ այլ հասկացություններ, որոնք իրենց մեջ բացառապես հայ միջնադարյան (ինչ-որ տեղ նաև հայ քրիստոնեական) մշակույթի, արվեստի, պատմության, բանահյուսության, լեզվաբանության և ազգագրության բովանդակությունն ու իմաստային ծանրաբեռնվածությունն են կրում և անվանապես չեն կարող ամփոփականորեն նույնացվել և առավել ևս, միանշանակ վտխանցվել Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. IX-VI դարերում գոյատևած տերության գրին ու լեզվին, նյութական ու հոգևոր մշակույթին և ռազմա-քաղաքական պատմությանը:

Ահա, թերևս, վերոհիշյալ բոլոր անհամապատասխանություններն էլ հաշվի առնելով, արևելագետների մի այլ խումբ (Ն.Վ. Հարությունյան, Հ.Հ. Կարազոյան և այլոք) նպատակահարմար գտավ հնարավորին չափ հարազատ մնալ մ.թ.ա. I հազարամյակի առաջին կեսի «տառին ու ոգուն» և մասնագիտական գրականության մեջ սկսեց կիրառել սեպագրերում հանդիպող ^{KUR} Biaina - ^{KUR} Biainili անվանաձևերի «Բիայնիլի - Բիայնելե» տարբերակը (Կարազոյան Յ. 1998, էջ 12, 20, 24, 160, 164 և այլն: Ару-тюнян Н. 1970): Սա, իր հերթին, առաջ բերեց պատմա-ժամանակագրական մի նոր անհամապատասխանություն: Բանն այն է, որ ^{KUR} Biainili տարբերակը (ինչպես նշեցինք վերևում) Հայկական լեռնաշխարհի սեպագիր տեքստերում հանդիպում է ընդամենը երկու անգամ և վկայված է միայն Ռուսա 1-ի (մ.թ.ա. 735-714 թթ.) Թոփուզավայի (YKH-264) և Նոր Բայազետի (Գավառ) (YKH-265) արձանագրություններում: Այսինքն՝ որպես քննարկվող տերության անվանում ^{KUR} Biainili-ն լավագույն դեպքում կիրառվել է մ.թ.ա. 735-714 թթ. ընդգրկող ժամանակահատվածում, և, ըստ այդմ էլ, դժվար թե կարող է առանց փաստացի հիմնավորման մ.թ.ա. 735 թվից առաջ և մ.թ.ա. 714 թվից հետո ևս հավակնել այդ դերը կատարելուն:

Ավելացնենք նաև, որ «Ուրարտու», «Ուրաշտու», «Բիայնա», «Բիայնիլի-Բիայնելե» և «Վանի թագավորության» երկրանվանական տարբերակները նախընտրող արևելագետներն իրենց մենագրություններում և հոդվածներում չիրաժարվեցին նաև վերոհիշյալ համադաս անվանումների զուգորդված օգտագործումից: Այսպես. նույն ուսումնասիրության մեջ քննարկվող երկիրը կարող է կոչվել «Բիայնա» կամ «Բիայնիլի», նրա սեպագիր լեզուն՝ «ուրարտերեն», իսկ էթնիկ կազմը կամ վերնախավը՝ «ուրարտացիներ»: Մեկ այլ հետազոտության մեջ երկիրը կարող էր հորջորջվել «Վանի թագավորություն», իսկ նրա դիցարանն ու նյութական մշակույթն՝ «ուրարտական»: Երրորդ աշխատության մեջ երկիրը կարող էր կոչվել «Ուրարտու», լեզուն՝ «խալդերեն», իսկ այդ հարցերը քննարկող գիտաճյուղը՝ «խալդագիտություն» (Март Н. 1920: Мещанинов И. 1927: Tseretheli M. 1928: König F. 1955: Տես նաև վերը հղված հրապարակումները): Հանգամանք, որ ինքնին խոսում է օգտագործված անվանական-տերմինաբանական համակարգի անկատարության և ոչ ճկուն լինելու մասին:

Մեր դարի 60-70-ական թվականներից սկսած և մասամբ նաև այժմ, հինարևելյան սեպագրերի վերծանման ու ընթերցման համընդհանուր օրենքներին ու համակարգին անձանոթ որոշ հետազոտողների հրապարակումներում, Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. IX-VI դարերի հզոր տերությունը ստացավ նաև «Արարատ» կամ «Արարատի թագավորություն» անվանումը (Շահինյան Լ. 1984: Այվազյան Ս. 1986: Իշխանյան Ռ. 1988: Իշխանյան Ռ. 1988 ա: Իշխանյան Ռ. 1989: Իշխանյան Ռ. 1989 ա: Կակուսյան Է.

1990: Վարպետյան Ա. 1992: Շահինյան Լ. 1994: Տերյան Ա. 1995: Хачатрян В. 1991: Геруни П. 1998, էջ 307-328): Ըստ որում, իսկապես անժխտելի հիմնավորում և իմաստային ծանրաբեռնվածություն ունեցող այս նոր երկրանուն-տարբերակի տակ, զուտ կամայական մասնատումներով ստացված «բառարմատային», «անձնանվանական» և «տեղանվանական» պարզունակ, երբեմն նաև շինծու զուգահեռների և մակերեսային, սուբյեկտիվ, երևակայական-ենթադրական մեկնաբանությունների մակարդակում սկսեցին շահարկվել՝ հայ ժողովրդի էթնիկ անադարտության, նրա՝ ի վերուստ երկրագնդի վրա առաջինը գոյություն ունեցած լինելու, աշխարհի հին և նոր մյուս ժողովուրդների ու մշակույթների նախաստեղծը հանդիսանալու և Հայկական լեռնաշխարհի սեպագիր տեքստերի լեզվաքերականական վերծանումների «մաքրման» և «վերընթերցման» (այն էլ հիմնականում ժամանակակից հայերենի հենքի վրա) խնդիրները...

Անվիճելի է, որ «Արարատ»-ն աստուրական արձանագրությունների «Ուրարտու» երկրանվան ոչաստուրերեն, նաև ավելի ուշ դրսևորված հայերեն անվանաձևն է (այս համընդհանուր կարծիքը չի կիսում միայն Հ.Կարազյոզյանը): Ըստ որում այն «Արարատի թագավորություն» և «Արարադի երկիր» տարբերակներով հանդիպում է ինչպես Հին Կտակարանի եբրայերեն օրինակում, այնպես էլ պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Այլ խոսքով, ինչպես «Ուրարտու», «Ուրաշտու», «Բիայնա» և «Բիայնիլի» անվանաձևերը, այնպես էլ «Արարատ»-ը, «Արարադի երկիր»-ը և «Արարատյան թագավորություն»-ը պատմական հավաստի սկզբնաղբյուրներով վկայված իրողություններ են և իրավունք ունեն գիտական կիրառության:* Այլ հարց է, թե ինչ են ներկայացրել մ.թ.ա. II հազարամյակի վերջի - մ.թ.ա. I հազարամյակի առաջին կեսի աստուրական տեքստերը, մ.թ.ա. I հազարամյակի կեսերին վերագրվող եբրայական աղբյուրները և Մովսես Խորենացու մատյանի միջնադարյան ձեռագիր կրկնօրինակում-ներն այդ անվանումների տակ և, որքանով են վերջիններս պատմա-ժամանակագրական և էթնո-մշակութային առումներով համադրելի: Ըստ մ.թ.ա. XIII-XI դարերի աստուրական արձանագրությունների Ուրուատրի-Ուրատրին Վանա լճից հարավ և հարավ-արևելք, Տավրոսյան լեռների շրջանում ապրող բազմաթիվ ցեղախմբերի (հայտնի են նրանցից ութի անվանումները) դաշնակցության հավաքական երկրանունն էր: Նույն սկզբնաղբյուրների մ.թ.ա. IX-VII դարերի հաղորդումներն արդեն «Ուրարտու» երկրանվան տակ ներկայացնում էին Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և թերևս հարավ-արևելյան մասը: Ըստ որում, «Ուրուատրի-Ուրատրի-Ուրարտու» տեղանվան ձևավորման գործում, արևելագետների և լեզվաբանների կարծիքով կարևոր դեր է խաղացել Կորդուքի լեռներում տեղավորված Արարդի (Արարդու) լեռան անվանումը («Աշխարհուսցույց»-ի Արարադ լեռն է, ժամանակակից Սիրիայի և Թուրքիայի սահմանագծին գտնվող Ջուդի դաղը): Հենց այս տարածքում է տեղադրում «Արարադի երկիր»-ը նաև պատմահայր Խորենացին: Ինչ վերաբերում է եբրայական աղբյուրներին, ապա «Արարատի թագավորություն» կամ «Արարատյան թագավորություն» անվան տակ վերջիններս թերևս ընկալել են Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային հատվածները:

Նույն երկրանվան տարածա-ժամանակագրական այս անհամապատասխանությունները գուցե բացատրելի են Ուրուատրի-Ուրարտուն կազմող ցեղախմբերի նախնական բնակության տարածքի (թերևս Կորդուքի լեռներից մինչև Վանա լիճն ընկած շրջանում) աստիճանական ընդարձակման և պատմա-մշակութային կարևորություն

* Մասնավորապես քննարկվող երկրի համար Արարատ անվանումն են նախընտրում նաև գերմանացի արևելագետները (Rimschneider M. 1966; Wartke R.-B. 1993):

ունեցող մի շարք իրողությունների, այդ թվում նաև աշխարհագրական որոշ անվանումների տեղափոխման, երկրորդման և նույնիսկ երրորդման հանգամանքով: Թերևս այդ ճանապարհով է Արարդի (Արարդու) լեռան անունն աստիճանաբար անցել ոչ միայն Ուրուատրի-Ուրատրի-Ուրարտու-Արարատ երկրին, այլև Արարատյան դաշտին և Արարատ լեռանը: Ի դեպ, վերջինիս առավել հին անվանումը Մասիսն է, որն իր հերթին տեղանվանական փոխակերպումների ու աստիճանական տեղափոխությունների իր ուղին ու բացատրությունն ունի և այդ առումով կարող է համադրվել շումերական էպոսի և առասպելների Մաշու լեռան, ժամանակակից Սիրիայի հյուսիս-արևմուտքում գտնվող Մասիուսի լեռնաշղթայի, Հայկական լեռնաշխարհի Նեխ-Մասիքի (Սիփսն սար) և Հյուսիսային Կովկասում գտնվող Մաշուկ լեռնագագաթի (Պյատի-գորսկի մոտ) անվանումների հետ (Փիլիպոսյան Ա., Քամալյան Հ. 1997, էջ 67-69): Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. IX-VI դարերում գոյատևած պետությանը միանշանակ «Արարատ» կամ «Արարատյան թագավորություն» անվանելուն, ապա այս խնդիրը դեռևս ամբողջապես չի լուծում առաջ քաշված պահանջները: Եվ ահա թե ինչու: Նախ, ինչպես «Ուրարտու», այնպես էլ «Արարատ», «Արարատի երկիր» կամ «Արարատյան թագավորություն» բնորոշումներն իսպառ բացակայում են խնդրո առարկա երկրի տիրակալների մայրենի լեզվով թողած արձանագրություններում: Բացի այդ, «Արարաթ» («Արարաթում») է կոչվել նաև ժամանակակից Եմենի մայրաքաղաք Սանայից մոտ 200 կմ հյուսիս-արևելք տեղավորված և Սաբայի թագավորության մութարիք Յասամար Բայինի ու նրա հաջորդների կողմից մ.թ.ա. VIII-VII դարերում կառուցապատված (այսինքն՝ Ուրարտու-Բիսյնիլի-Արարատին համաժամանակյա) քաղաք-ամրոցը (Կարազեոզեան Յ. 1998, էջ 280-281: Лундин А. 1971, էջ 153: Грязне — вич П. 1978, էջ 4, 6, 11, 13, 15, 273-274, 276): Ավելացնենք նաև, որ մ.թ.ա. I հազարամյակի կեսերին և ավելի ուշ «Արիարաթ» անձնանունն են կրել Կապադովկիայի թագավորության առնվազն ինը տիրակալներ (Бикерман Э. 1976, էջ 200): Փաստեր, որոնք անմիջական կապ (և ընդհանրապես որևէ կապ) չունեն «Ուրարտու», «Բիսյնիլի» կամ «Վանա» երկրի անվան ու զբաղեցրած տարածքի հետ և կարող են տեղանվանական ու անձնանվանական ավելորդ խառնաշփոթությունների պատճառ հանդիսանալ:

Ահա վերոհիշյալ անհամապատասխանություններից և խառնաշփոթություններից խուսափելու նպատակով, Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. II հազարամյակի վերջին քառորդից հիշատակվող և մ.թ.ա. IX-VI դարերում պետականության հասած հզոր տերության համար, մենք նպատակահարմար ենք համարում գիտական շրջանառության մեջ մտցնել «Վանտոսայի թագավորություն» (կարելի է նաև «Վան-Տոսայի թագավորություն») անվանում-տերմինը: Բանն այն է, որ խնդրո առարկա երկրի տիրակալներն (Իշպուինի, Մենուա, Արգիշթի I, Սարգուրի II, Ռուսա I, Արգիշթի II, Ռուսա III) իրենց սեպագիր հաղորդումներում՝ սեփական տիտղոսները թվարկելիս, անշուշտ, ոչ պատահականորեն, ընդգծել են նաև Biaina (Վան) երկրի թագավորն ու Tušpa (Տոսայ) քաղաքի տերը լինելու պարագան (YKH — 19: 25: 37: 39: 42: 45: 57-59: 61: 66-70: 72: 79: 91: 92: 101-108: 119: 127: 128: 130: 131: 134: 136-138: 144-147: 155: 158: 164: 165: 168: 170: 173: 269: 278: 280: 281: 287: 293-296):* Այսինքն՝ տվյալ դեպքում արքայական

* Այս առումով, հատուկենտ են այն տեքստերը, որտեղ վերոհիշյալ տիրակալների մի մասի տիտղոսացանկերում Biaina երկրանունը հանդիպում է առանց Tušpa քաղաքանվան և ընդհակառակը՝ Tušpa-ի առկայության դեպքում բացակայում է Biaina-ն: Մեր հաշվարկներով կարելի է փաստել այդպիսի 11 դեպք, որոնցից երկուսում բացակայում է Tušpa քաղաքանունը (YKH — 265: 276), իսկ իննում՝ Biaina-ն (YKH — 29: 34: 127 II: 161: 287: 293-296): Այլ խոսքով, ինը դեպքում Tušpa քաղաքանունը նաև երկիր է խորհրդանշել: Այստեղ հարկ է բերել մեկ

տիտղոսների տասնամյակներով մշակված և իմաստավորված բանաձև-սահմանում-ներում Biaina-Վան և Tušpa-Snuս տեղանունների հաջորդական, համադրված կիրառումն անվերապահորեն ընկալվել է որպես խնդրո առարկա հզոր և անկախ տերության էթնո-ռազմա-քաղաքական, կրոնական և աշխարհա-տարածական ընդհանրության անվանական խորհրդանիշ: Ուստի «Վանտոսս» («Վան - Տոսս») երկրանուն տերմինը սույն գրքի հեղինակների կողմից հորինված և կամայականորեն հարմարեցված երկրանուն չէ, այլ սեպագիր սկզբնաղբյուրներով փաստված կոնկրետ իրողություն, որը հարյուրամյակներ անց էլ պահպանվել է Հայոց աշխարհի Վասպուրական մահանգի Վանտոսս գավառի անվան մեջ (Թովմա Արծրունի և Անանուն 1985, էջ 102-103, 372-375 և այլն): Այս գավառը տարածական առումով ևս, ըստ էության, համընկնում է քննարկվող երկրի բուն սահմաններին և (մեկ անգամ ևս ուզում ենք ընդգծել) իր անվան մեջ անխաթար կերպով վերարտադրում է վերջինիս սեպագիր երկրանվան (^{KUR} Biaina - Վանա երկիր) և մայրաքաղաքի (^{ANU} Tušpa-Snuսպա քաղաք) բառարմատային համակցությունը: Առաջարկվող անվանում-տերմինը հարմար է մաս քննարկվող հզոր տերության լեզվական, էթնիկական, մշակութային և այլ իրողությունները ներկայացնելու առումով: Այսպես, Վանտոսսի թագավորության սեպագիր արձանագրությունների լեզուն կարելի է անվանել «վանտոսսերեն», բնակիչներին՝ «վանտոսսացիներ», մշակույթը՝ «վանտոսսյան» և այդ ամենի տակ ընկալել Հայաստանի պատմության մ.թ.ա. IX-VI դարերին վերաբերող պատմա-մշակութային կոնկրետ իրողությունները: Սա, ըստ մեզ, հնարավորին չափ սահմանափակում է տարածամասնակյա դրսևորում և էթնո-աշխարհագրական հենք ունեցող համանվանական խառնաշփոթություններն ու հստակորեն ընդգծում, որ վերոհիշյալ հասկացությունների տակ գործ ունենք Վան-Վասպուրականի (մասն` Հայկական լեռնաշխարհի) հայ ազգաբնակչության անմիջական մախնիներից մեկը հանդիսացող տեղաբնիկների նյութական և հոգևոր մշակույթի, գրի ու պատմության հետ: Այդ իսկ պատճառով, մենք համակարծիք չենք այն ուսումնասիրողներին, որոնք առաջադրված այս տեղանուն-տերմինի տակ սոսկ մշակութային ծանրաբեռնվածություն են ընկալում, վերջինս փորձում են մատուցել որպես Իշպուինի և Մենուա արքաների բարեփոխումների ծրագրի իրականացման հետևանքով ձևավորված «էլիտար, պետական մշակույթ» և այն առանձնացնում են ու, ըստ էության, հակադրում Հայաստանի (Ժամանակակից սահմանների մեջ տեղաբաշխված) համաժամանակյա հուշարձաններից հայտնաբերված և այսպես կոչված «տեղական մշակույթի» արգասիք համարվող նյութական արժեքներին: Առավել ևս, որ նշվածը հիմնավորվում է «ապրելաձևի» նկատվող տարբերություններով (Եսայան Ս., Բիյագով Լ., Հմայակյան Ս., Կանեցյան Ա. 1995, էջ 59-60): Ինչ «տեղական» և «ոչ տեղական» իրողությունների մասին է խոսքը, երբ երևույթը վերաբերում է ողջ Հայկական լեռնաշխարհին և գոյություն ունի բացառապես նրա աշխարհա-քաղաքական սահմանների ներսում: Չենք խոսում արդեն «տեղական» և «ոչ տեղական» բերովի» հասկացությունների մակարդակում կատարվող նման տարբերակման հետևանքով հնարավոր ոչ ցանկալի «գիտական» շահարկումների մասին...

Ահա թե ինչու, մենք առաջարկում ենք Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. IX-VI դարերի քաղաքական, էթնիկական, մշակութային և լեզվական կոնկրետ դրսևորումները

ուշագրավ դիտարկում ևս: Իշպուինի և Մենուա արքաների համատեղ գահակալման ժամանակ փորագրված Կելյաշինի երկլեզու արձանագրության աստուրերեն հատվածում (YKH — 193,16) Տուշպան անվանվում է Նաիրի երկրի մայրաքաղաք:

ներկայացնել «Վանտոսպ» («Վան-Sոսպ») պատմական տեղանունից բխող տերմինորակումներով:

Վանտոսպի թագավորության նյութական մշակույթին, պատմությանը, կրոնին, ճարտարապետությանն ու քաղաքաշինությանը, գրին ու լեզվին, կենցաղին ու գործունեության այլ ոլորտներին վերաբերող ամենատարբեր հարցերը շուրջ մեկ ու կես հարյուրամյակ է, ինչ բազմաթիվ արևելագետների, պատմաբանների, արվեստագետների, լեզվաբանների ու հնագետների ուշադրության կենտրոնում են (Ղափանցյան Գ. 1940: Եսայան Ս. 1982: Ղաֆադարյան Կ. 1984: Հմայակյան Ս. 1990: Մելքոնյան Ս. 1995: Կարազեղզեան Յ. 1998: Մովսիսյան Ա. 1998: Փիլիպոսյան Ա. 1998: Անանյան Գ. 1999: Мещанинов И. 1927: Меликишвили Г. 1954: Пиотровский Б. 1959: Марти — росян А. 1961: Пиотровский Б. 1962: Дьяконов И. 1963: Арутюнян Н. 1966: Дьяконов И. 1968: Арутюнян Н. 1970: Мартиросян А. 1974: Мещанинов И. 1978: Ходжаш С., Трухтанова К., Оганесян К. 1979: Оганесян К. 1980: Есаян С. 1985, էջ 112 — 122: Арутюнян Н. 1985: Хачикян М. 1985: Vanden Berghe L., De Meyer L. 1982-1983: Merhav R. 1991 և այլն):

Կուտակված ու հետազոտված հսկայածավալ նյութը և վերջինիս հիման վրա արված վերլուծություններն ու մեկնաբանությունները բացառիկ նշանակություն ունեն Հայաստանի վաղ շրջանի պատմության կոնկրետ շրջափուլի համակողմանի ուսումնասիրության գործում: Այսուհանդերձ, յուրաքանչյուր նոր հուշարձանի հետազոտությունն ի գործ է փոփոխություններ մտցնել վերջնական թվացող մեկնաբանությունների համակարգում, պահանջելով նոր և արդիական միջոցների ու եղանակների, ինտեգրացված գիտական համակարգերի օգտագործում և, այս ամենի հենքի վրա, անվիճելի համարվող եզրահանգումների ստուգում, շտկում, լրացում և եթե հարկ կա՝ նորովի մեկնաբանում:

Այդպիսի ինքնատիպ և Վանտոսպի թագավորության պատմության ու մշակույթի հետազոտման համար կարևոր նշանակություն ունեցող հնագիտական հուշարձանի՝ Գեղիոփտի քարայր-դամբարանի ուսումնասիրությանն էլ նվիրված է սույն աշխատանքը:

* * *

Հնարավոր է տարիներ անց այս ուսումնասիրության մեջ արված եզրահանգումների ու մեկնաբանությունների մի մասը կորցնեն իրենց գիտական թարմությունը: Սակայն, գիտական տեսանկյունից ուսումնասիրելի և մեծարժեք կմնա Հայաստանի պատմության Պետական թանգարանի զետեղարանում պահվող հնագիտական այն ժողովածուն, որ 1980 թվականին հավաքվեց և 1993-ին պեղվեց Գեղիոփտում ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար հնագետ, պատմական գիտությունների թեկնածու Լևոն Պետրոսյանի, ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, հնագետ Աշոտ Փիլիպոսյանի, գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, հնագետ-մարդաբան Ռուզան Մկրտչյանի, գիտաշխատող, հնագետ Նորա Ենգիբարյանի և Հայաստանի Պատմության Պետական թանգարանի Հնագիտության բաժնի վարիչ Լյուդվիգ Խաչատրյանի ջանքերով:

Այդ կարևոր գործին իրենց անմիջական մասնակցությունը բերեցին նաև Գեղիոփտ գյուղի բնակիչներ Աբգար Հովհաննիսյանը, Սմբատ Հովհաննիսյանը, Կտրեն Շահումյանը, Համբարձում Սուքիասյանը, Գնունի Մանվելյանը, Հայկ Ղարիբյանը, Վահան Նովիկյանը, Լիա Խաչատրյանը, Հենրիկ Հովհաննիսյանը, Խաժակ Մանուկյանը, Եղիազար Հունանյանը, Վաղինակ Խաչատրյանը, Արմեն Շահումյանը և այլոք:

Հեղինակներն իրենց շնորհակալությունն են հայտնում նաև Երևանի բժշկական Համալսարանի թերապևտիկ ատամնաբուժության ամբիոնի վարիչ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վալերի Տատինցյանին և դոցենտ Լևոն Անդրեասյանին, հուշարձանից հայտնաբերված հնամարդաբանական նյութի ատամնաձուլության համակարգի հետազոտման և մասնագիտական ախտորոշման համար:

Հավաքածուի մետաղական առարկաները մաքրվել ու ամրակայվել են Հայաստանի Պատմության Պետական թանգարանի վերականգնման լաբորատորիայում, Այրիս Եսայանի կողմից:

Խեցեղեն անոթները մաքրել, հավաքել և ամրակայել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակից, վերականգնող Վարդան Վարդանյանը:

Գրքում զետեղված գծանկարներն ու չափագրություններն իրականացրել է ԵՊՀ հնագիտության լաբորատորիայի նկարիչ Անժելա Դավթյանը:

Տեքստի համակարգչային շարվածքը կատարել են Տաթևիկ Շախկյանը, Լիլիթ Վանյանն ու Անահիտ Սարգսյանը: